Պետք է պատրաստ լինեն ամեն հալածանքի: Եթե մարդ քաջություն չունի, ուրեմն հովիվ լինելու իրավունք չունի, որովհետեւ մենք Քրիստոսի կողմից կոչված ենք քաջ հովիվներ լինելու եւ ոչ թե՝ վարձկաններ: Երբ տեսնում ենք, որ գայլը գալիս է, ոչ թե մեր հոտին թողնենք ու փախչենք, այլ հոտի պաշտպանության համար կռվենք:

Կարդացեք՝ էջ 4

Ժամանակավոր անաշխատունակության հաշվարկման նոր համակարգը գործարկվել է սեպտեմբերից եւ արդեն հարուցել է քաղաքացիների դժգոհությունը: Նախկին կարգը պարզ էր՝ հիվանդության դեպքում սովետից եկած «բյուլետեն» ստանալով, մարդն այն ներկայացնում էր գործատուին, եւ նրա բացակայության օրերի համար գումար չէր պահվում:

Կարդացեք՝ էջ 6



Ադենաուերի ղեկավարությամբ Գերմանիան վերածնվեց պատերազմի մոխիրներից, եւ դա նա արեց արժանապատվորեն՝ առանց հոխորտանքի, անորոշության եւ բռնաճնշումների: Փաշինյանի կառավարումը պարտությունների չընդհատվող շարան է, երկիրն ու մարդիկ հայտնվել են խոցելի անվտանգության, ապատիայի, ապագայի նկատմամբ անվստահության մեջ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 190 (4092), 26 նոյեմբեր, չորեքշաբթի, 2025

www.hraparak.am

Սրբազան պայքարի գործով անցնող միակ կին բանտարկյալ Լիդիա Մանթաշյանի խափանման միջոցը չփոխելու հարցը շարունակում է քաղաքական-հասարակական շրջանակների քննարկման առանցքում մնալ: Գործով անցնող բազմաթիվ տղամարդկանց կալանքը տնային կալանքով կամ վարչական վերահսկողությամբ փոխվելուց հետո շատերին է հետաքրքրում, թե ինչու չեն փոխում Լիդիայի խափանման միջոցը՝ ինչ է արել այս աղջիկը, որի նկատմամբ ռեժիմը նման դաժանությամբ վրեժխնդիր է լինում: Մենք օրեր առաջ գրել էինք ՔՊ կուլիսներում ընթացող վարկածներից մեկի մասին, թե Լիդիան էր Վահագն Ալեքսանյանի արդեն հանգուցյալ մոր հետ հայտնի միջադեպի ժամանակ բախվել: Դա տեղի է ունեցել գարնանը, երբ Սրբազան շարժման անդամները Նիկոլ Փաշինյանին անվստահության հարցումն էին անում: Սակայն մի ստվար զանգված էլ կարծում է, որ Լիդիա Մանթաշյանի նկատմամբ Փաշինյանն անձնական վրեժ ունի, քանի որ նա էր Փաշինյանի խրտվիլակով տպավորիչ ակցիայի գլխավոր հերոսուհին եւ կատաղի պայքար էր մղում, որ խրտվիլակին ոստիկանները «բերման չենթարկեին»: Այդ ակցիան Սրբազան պայքարի ներկայացուցիչներն իրականացրին անցած տարվա հոկտեմբերին՝ դատախազության շենքի մոտ: Փաշինյանի խրտվիլակը կալանավորի հագուստով էր, ակցիայի մասնակիցները պահանջում էին Նիկոլ Փաշինյանի դեմ քրեական գործ հարուցել՝ Արցախում ցեղասպանությանը, էթնիկ զտմանը հանցակցության համար:



Երեկ Մայր Աթոռում եպիսկոպոսաց ժողով էր, քննարկում էին Եկեղեցու շուրջ ստեղծված վիճակը եւ իրենց անելիքները: Ներկա էին նաեւ Վայոց Ձորի եւ Մասյացոտնի թեմերի առաջնորդները, որոնք մասնակցել էին Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ պատարագին եւ թույլ էին տվել, որ իրենց ներկայությամբ զեղչվի պատարագի՝ Վեհափառին վերաբերող հատվածը: Ժողովից հետո մենք տեղեկացանք, որ ՀԱԵ վերնախավի դիրքորոշումը բավականին կոշտ է եղել՝ որոշվել է չգնալ ոչ մի կոմպրոմիսի եւ պատարագի կարգի խախտումները չներել: Նման խախտումներ կատարած քահանաներն ու պատարագներին ներկա գտնված թեմերի առաջնորդները եթե զղջման չգնան, կարգալույծ կարվեն: Հիմա բոլորը սպասում են նրանց զղջման հայտարարություններին: Կարգազանց սրբազանները շատ խեղճացած են եղել, հասկացել են, որ կոպիտ սխալ են թույլ տվել: Նախ, որովհետեւ հանրային մեծ պարսավանքի արժանացան, ապա՝ որովհետեւ ՀԱԵ վերնախավը զիջումների չի գնալու՝ հասկանալով, որ զիջում՝ նշանակում է Եկեղեցու կազմաքանդում եւ Վեհափառի հրաժարական:

Անձի երկվություն

Այն, որ մեր երկրում երկակի ստանդարտները ծաղկում են, թերեւս, ոչ մեկի համար գաղտնիք չէ: Դա հատկապես ակնառու է դատաիրավական համակարգում, երբ ծանր հանցագործներն ազատության մեջ են, իսկ միտինգ գնացողներին, իշխանությանը քննադատողներին կալանավորում են եւ ամիսներով պահում բանտում: Բայց այն, որ կառավարության ղեկավարը կարող է ինքն իրեն այսքան հակասել, ինքն իր ասածները հերքել՝ այնպես, կարծես 2 իրար հետ անհաշտ մարդիկ են նույն մարմնում, զարմանահրաշ բան է: Ահա՝ հայտարարում է, որ իրեն Արցախի բնակիչները չեն ընտրել, եւ ինքը չի կարող նրանց փոխարեն բանակցել ու որոշումներ կայացել, ժամանակ է անցնում, եւ նա բազում փաստաթղթեր է ստորագրում՝ Արցախի անունից: Արցախը ճանաչում է Ադրբեջանի կազմում, Մինսկի խումբն է լուծարում, հայտարարում է, որ Արցախի հարցն այլեւս փակված է: Արծվաշենի մասին խոսելիս հայտարարում է, որ ինքը՝ որպես վարչապետ, չի կարող երկրի տարածքից մի միլիմետր հանձնել, որ սահմանների փոփոխությունը միայն հանրաքվեով է արվում, բայց տասնյակ կիլոմետրեր՝ սահմանազատման անվան տակ, հանձնում է թշնամուն: Եվ հայտարարում է, որ Ադրբեջանի օկուպացրած տարածքները ռազմական ճանապարհով հետ չեն բերվելու: Խոսում է իշխանության տարանջատման սկզբունքի, Սահմանադրությունը հարգելու մասին, բայց չկա օր, որ չխախտի այդ սկզբունքները՝ իրավապահներին ուղիղ ցուցումներ չտա, sms-ով պաշտոնյաներ չազատի, անգամ ընտրված պատգամավորին է պարտադրում մանդատը վայր դնել: Ներխուժում է մարդկանց անձնական կյանք, գաղտնի տեղեկություններ ստանում իրավապահներից, Եկեղեցու իրավասություններին միջամտում: Շարունակ ասում է՝ ընտրակեղծարարության էջը փակ է, բայց ընտրակեղծիքներով ու հետընտրական ճնշումներով ընտրությունների արդյունքներ է կեղծում:

Պետական ծառայողների հետ համաժողովի ժամանակ Փաշինյանը խոսել է պետական ապարատի արդյունավետությունից եւ առաջարկել, որ ներկաներն էլ արտահայտվեն: Մեծ մասը աշխատավարձերի բարձրացման հարցի մասին է խոսել: Հավաքից հետո նա ենթականերին հրահանգ է իջեցրել՝ ուսումնասիրել, հաշվարկներ անել, թե ինչքան կկարողանան եկող տարվանից բարձրացնել պետական ծառայողների աշխատավարձերը: Դա ներկայացրել է իբրեւ քաղծառայողների կողմից ձեւակերպված պահանջ, սակայն ակնհայտ է, որ ընտրությունների շեմին մոտ 8 հազար մարդու փորձում են իրենց կողմը գրավել: Իսկ ապարատում կարծում են, որ վաղուց կարող էին իրենց աշխատավարձերը բարձրացնել, եթե վերեւներում միլիոնավոր դրամների աշխատավարձեր ու պարգեւավճարներ չբաժանեին:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳՈՀ Է ՄԱՐԶՊԵՏԻՑ

Չնայած թե Հովհաննավանքում, թե Թալինում եւ Արարատում պատարագների մասնակիցների թիվն ավելի մեծ է եղել, քան Վայոց Ձորի Խաչիկ համայնքում, սակայն կան տեղեկություններ, որ Նիկոլ Փաշինյանը հատկապես գոհ է Վայոց Ձորի պատարագից: Եվ հիացած է դրա գլխավոր կազմակերպիչ Վահագն Արսենյանով՝ Վայոց Ձորի մարզպետով: Ասում են՝ իր գոհունակությունը չի էլ թաքցրել: Դա պայմանավորված է նրանով, որ հենց Վայոց Ձորում էր, որ առաջին անգամ ՀԱԵ թեմի առաջնորդ մասնակցեց՝ ի դեմս Վայոց Ձորի թեմի առաջնորդ Աբրահամ սրբազանի: Եկեղեցի-իշխանություն հակամարտությունում սա Փաշինյանը համարում է լուրջ հաղթանակ, եւ հենց այդ պատարագից հետո «օվերտոնի պատուհանը բացվեց», ու այլ սրբազաններ էլ սկսեցին մտածել ճամբարափոխության մասին, եւ անգամ Վեհափառին ամեն ինչով երախտապարտ Մասյացոտնի թեմի առաջնորդ Գեւորգ սրբազանը գնաց պառակտիչ պատարագին մասնակցելու: Իսկ Վայոց Ձորի թեմի առաջնորդին պատարագին բերելու հարցում, ասում են, որոշակի դեր է խաղացել նորանշանակ մարզպետը, որը «Ձերմուկ գրուպի» սեփականատեր, ՀՀԿ-ական հայտնի օլիգարխ, Սերժ Սարգսյանի վաղեմի մտերիմ Աշոտ Արսենյանի որդին է: 2021 թվականի նախընտրական քարոզարշավի ժամանակ Արսենյանները Վայոց Ձորում դեռ հյուրընկալում էին Սերժ Սարգսյանին, եւ կրտսեր Արսենյանն անգամ ներկա էր քարոզարշավին: Ուշագրավ է, որ Մասյացոտնի առաջնորդն էլ է որոշակիորեն կապված ՀՀԿ-ի հետ, նա Մասիսի կալանավորված քաղաքապետ Դավիթ Համբարձումյանի մտերիմն է եւ մեծապես նրան է պարտական թեմի առաջնորդ դառնալու համար:

ԳՈՐԾԱԿԱԼ

ԲՈԼՈՐ՝ ԴՐՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂՆԵՐՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ԵՆ

2 օր առաջ պաշտպանության նախկին նախարար Արշակ Կարապետյանը սկանդալային տեսանյութ էր տարածել, որտեղ խոսել էր այն մասին, որ դեռեւս 1999 թվականին ԱՄՆ հատուկ ծառայությունները հավաքագրել են Նիկոլ Փաշինյանին եւ օգտագործել որպես գործակալ: Նա սեղանին դրված թղթապանակն էր ցույց տվել եւ նշել, որ իր ասածները կարող է հիմնավորել գրավոր ապացույցներով, որոնք վերջերս է ձեռք բերել: «Եթե մեկն ուզում է իմանալ, թե ով է այն մարդը, որը մի քանի պետությունների կողմից համարվում է ազդեցության գործակալ, ապա դա մեր երկրի ղեկավարն է»,- հայտարարել է Կարապետյանը: «Եթե դա այդպես չէ, ապա ինքը թող ընդամենը բացատրի՝ ինչպես Արարատ Միրզոյանը նշանակվեց ԱԳ նախարար: Սա՝ այն դեպքում, որ պաշտոնակատարն Արմեն Գեւորգյանն էր, դե թող ասի՝ ինչու Գեւորգյանին չնշանակեց, այլ՝ Միրզոյանին: Թող ասի, ու կտեսնենք՝ ով է գտնվել ազդեցության տակ: Եթե շարունակեցին, ապա ես պատմելու եմ այն, ինչ եղել է իրականում: Ասում եմ՝ ինքնիշխան կառավարություն, ինքնիշխան կառավարություն. ո՛չ այն ժամանակ են եղել ինքնիշխան կառավարություն, ո՛չ էլ հիմա: Թող երգեր չերգեն»,- ասել է նա եւ պատմել, որ ինքը դեռ 2020-ի օգոստոսի 14-ին զգուշացրել է Փաշինյանին, որ պատերազմ է սպասվում: «Ես նկատեցի, որ ինքը սքրինշոթեր է անում, ես՝ ինքս սկսեցի անձամբ զբաղվել դրանով, ու բոլոր խոսակցությունները նրա հետ իմ մոտ ձայնագրված կա: Ու երեւի ժամանակն է, որ այդ ձայնագրությունները սկսենք տարածել, այդ թվում՝ այն ձայնագրությունը, երբ ես իրեն ասում եմ՝ հավատացեք սեփական հետախուզության տվյալներին: Ես պաշտպանվելու համար եմ ստիպված եղել ձայնագրել, ես հետախուզության պետ եմ եղել 10 տարի...»,- նշել է Կարապետյանը:

«Մենք ունենք ԱՄՆ դեսպանատան աշխատակիցներից մեկի զեկույցն իր վերադասին այն մասին, որ Փաշինյանը, դեռ 1999 թվականին լինելով թերթի խմբագիր, հավաքագրվել է այդ երկրի հետախուզության կողմից»,- ներկայացրել է նախկին նախարարը եւ պատմել, որ այդ զեկույցում դեսպանատան աշխատակիցը նաեւ նկարագրել է Նիկոլ Փաշինյան ագենտին՝ որպես մարդ, գրել է, որ նա ունի ցածր մարդկային չափանիշներ, ահավոր ինքնասեր է, ժլատ է, հոգեբանական անկայուն վիճակում է, եւ վերջում եզրակացություն՝ հենց այդպիսին էլ նա իրենց պետք է: Նշել է նաեւ, որ Փաշինյանը գումարներ է ստացել ԱՄՆ կառավարությունից՝ գաղտնի տեղեկություններ տրամադրելու դիմաց: Կարապետյանը նշել է նաեւ, թե ինքը ստույգ տվյալներ ունի, որ այս տարիներին զենք չի գնվել, որ ինքն ամեն ինչ տալու է թուրքերին, եւ կոչ է արել պայքարել այս իշխանության դեմ:

«Ազգային անվտանգություն» կուսակցության ղեկավար **Գառնիկ Իսագուլյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով Կարապետյանի այս հայտարարությանը, ասաց. «Ես չեմ կարող այս հայտարարությանը միանշանակ լուրջ վերաբերվել, որովհետեւ ինչքանո՞վ է արժանահավատ, որ Կարապետյան Արշակը կարող է հավաստել իր խոսքերը: Փաստեր են պետք: Նա խոսում է խոշոր ազդեցության գործակալների մասին: Կա չորս տեսակի գործակալ: Ազդեցության գործակալների մասին սովորաբար որեւիցե տվյալ չի ֆիքսվում: Հայաստանում կարելի է ասել, որ բոլոր հայտնի կազմակերպությունները, որոնք աշխատում են օտար պետությունների ֆինանսավորմամբ, անխտիր ազդեցության գործակալներ են: Խոսքն այն՝ մարդու իրավունքներով զբաղվող ՀԿ-ների մասին է, սորոսական գրանտներով ծրագրեր իրականացնողների մասին է եւ այլն: Գաղտնիք չէ, որ նրանք բոլորն աշխատում են դրսի փողերով, ուստի ազդեցության գործակալներ են: Պատահական չէ, որ տարբեր երկրներ այժմ ընդունում են օրենսդրական ակտեր, որոնց համաձայն՝ արգելվում է օտար պետության կողմից ֆինանսական միջոցներ ստանալն ու գործունեություն ծավալելը: Վրաստանը, Ռուսաստանն ընդունեցին նման օրենքներ»:

Իսկ Ռուսաստանից ֆինանսավորվող կառույցները եւ անձինք ե՞ւս ազդեցության գործակալներ են: «Այո, ոչ մի տարբերություն չկա: Եթե ֆինանսական միջոցները գալիս են դրսից, դա նշանակում է, որ տվյալ մարդիկ ինչ-որ առումով ազդեցության գործակալներ են: Մարդիկ օրենսդրական ակտեր են ընդունում՝ այդ ամենն արգելելու նպատակով, կամ բավականին լուրջ հսկողություն են սահմանում: Նորից ուզում եմ անդրադառնալ Արշակ Կարապետյանին: Գիտեք, կան բաներ, որոնք գեներալի ուսադիր կրողին, ժամանակին տարբեր կարեւոր պաշտոններ զբաղեցնողին նման պրիմիտիվ ձեւով հայտարարություններ անել չի սազում.. ունի՞ փաստեր, թող հրապարակի: Ունե՞ր փաստեր, ապա ինչո՞ւ էր սպասում մինչ այս պահը, որ այս մարդը գա՝ Արցախ հանձնի, ինչ ասես անի, Հայաստանի տարածքները կորցնենք, նո՞ր խոսի: Ինչի՞ն էր սպասում, եթե ինքն էլ ազդեցության գործակալ չէ, ինչո՞ւ հենց հիմա որոշեց խոսել: Ես չեմ կարծում, որ այս հայտարարությանն արժե այդքան լուրջ վերաբերվել, բացառապես կարելի է այս մասին խոսել, եթե լինեն փաստեր: Կան շատ հարցեր, խնդիրներ, որոնց մասին մենք բարձրաձայնել ենք ու հիմա դատական գործերի մեջ ենք, սակայն մենք դա արել ենք՝ ելնելով մեր դիտարկումներից ու վերլուծություններից»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մարզպետի փեսան՝ «Հայփոստի» մասնաճյուղի տնօրեն

2024թ. ապրիլին Նիկոլ Փաշինյանն Իջեւան քաղաքում կայացած մեծ հանրահավաքում հայտարարեց, որ նոր Հայաստանում պաշտոնների չեն նշանակվելու խնամի-ծանոթ-բարեկամ մոտեցումով: Սակայն այդ խոստումը, Փաշինյանի մյուս խոստումների նման, սուտ դուրս եկավ: Նա 2019թ. սեպտեմբերի 12-ին իր դասընկեր, ամուսնության քավոր Հայկ Ղալումյանին նշանակեց Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, իսկ երբ համոզվեց, որ ընտրություններում Ղալումյանն ի վիճակի չէ հաղթել, 2021թ. ապրիլի 8-ին նշանակեց Տավուշի մարզպետ: Մարզպետից զատ, Տավուշի մարզպետարանում աշխատում են Նիկոլ Փաշինյանի այլ ծանոթներ, դասընկերներ եւս: Իջեւանում ասում են, որ հիմա Ղալումյանների տիրապետության ժամանակաշրջանն է: Վերջերս մարզպետ Հայկ Ղալումյանի աղջկա ամուսինը՝ Սասուն Անտոնյանն էլ նշանակվել է «Հայփոստ» ՓԲԸ Իջեւանի մասնաճյուղի տնօրեն: Իջեւանի բնակիչներն ասում են, որ Սասունը հաջողակ գործարար է, անասնակերի մեծ խանութ ունի, նաեւ՝ մեծ բեռնատար, նրա գործերն առանց այդ պաշտոնի էլ լավ էին: «Հայփոստը» թեեւ ոչ պետական կազմակերպություն է, սակայն իշխանության կապերն ամենուր աշխատում են:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԿԻՆ ՀԱՄԵՍՏ ՈՒՍՈՒՑՉԻՑ ԲԱՆ ՉԻ ՄՆԱՑԵԼ

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը նախօրեին խորհրդարանում մի աղմկահարույց հայտարարություն արեց՝ պատասխանելով հարցին, թե ինչու են վերջին շրջանում մի շարք փորձառու սպաներ ազատվել կամ հեռացվել ծառայությունից: Նախարարն ասաց. «Պետք է հասկանալ, թե իրականում ինչ փորձ ունեին այդ մարդիկ: Մենք գործ ունենք մի համակարգի հետ, որի խնդիրների մասին գաղտնիք չէ, որ հաճախ է խոսվել: Հետեւաբար, պետք է ազատվել ռիսկային մարդկանցից, ինչը հիմա էլ տեղի է ունենում»: Թե խոսքն ինչ «խնդիրների» մասին է, եւ ինչ նկատի ունի «ռիսկային մարդիկ» ձեւակերպումով, Պապիկյանը չմանրամասնեց:

Սակայն համակարգի մեր աղբյուրներից տեղեկացանք, որ դեռեւս 2022 թվականից հետո՝ Պապիկյանի ոտքը ՊՆ դնելու պահից սկսած, համակարգում «չիստկա» է սկսվել, հեռացրել են քաղաքական այլախոհներին: Այդ «չիստկան» կրկին նոր թափ է ստացել վերջին շրջանում, եւ ոմանք դա բացատրում են նախընտրական շրջանով: Նման զտումների ալիք ՊՆ-ում բարձրացել է նաեւ 2018-2022 թվականներին՝ իշխանափոխությունից հետո: «Ռիսկային մարդիկ» ասելով՝ Սուրեն Պապիկյանը նկատի ունի նախկիններին հետ այս կամ այն կերպ ազգակցական, բարեկամական եւ ընկերական կապեր ունեցողներին: Ում հայտնաբերում են, անմիջապես լուծում են նրա հարցերը: Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք պաշտպանական գերատեսչությունում առաջնորդվում են ոչ թե պետության պաշտպանության եւ անվտանգության առաջնահերթություններով, այլ՝ սեփական իշխանությունը պահելու հաշվարկով:

ՊՆ մեր աղբյուրի պատմելով, Պապիկյանը խնդիր է դրել անգամ կենտրոնական ապարատը՝ բարձրաստիճան զինվորականների թվակազմը զգալի կրճատել, խոսքը 200-250 զինվորականի մասին է, սակայն կանխատեսելով, որ դա կարող է աղմուկ բարձրացնել եւ ամենակարեւորը՝ ընտրությունների նախաշեմին այդքան ընտանիքների, նաեւ նրանց հարազատներին իշխանության դեմ կհանի, որոշման իրագործումը հետաձգել է: Ըստ այդմ, կրճատումներ կարվեն խորհրդարանական ընտրություններից հետո: Իսկ հիմա նախընտրական պոպուլիստական ծրագրերի հերթն է:

Առաջիկա նիստին հրատապ ռեժիմով կընդունեն զինծառայությունը կես տարով կրճատելու մասին վտանգավոր նախագիծը: Որոշ տեղեկություններով, անգամ ՔՊ-ում որոշները հասկանում են, որ չի կարելի պոպուլիզմին տուրք տալ՝ դրան ստորադասելով բանակի մարտունակության հարցը, եւ գնալ արկածախնդրության՝ բացառապես այն նպատակով, որ հանրության որոշ շերտերի գովասանքին արժանանան ու մի քանի քվե կորզեն: Պարզ է, բոլորն էլ կուզենան, որ իրենց զավակները քիչ ծառայեն, բայց եթե դա արվում է պետության անվտանգության հաշվին, ապա անթույլատրելի է: Բանն այն է, որ ժամկետի կրճատումը, ըստ հաշվարկների, հանգեցնելու է նաեւ թվակազմի կրճատման, հետեւաբար, մարտական հերթափոխի խնդիր է առաջանալու՝ առնվազն առաջիկա մի քանի տարիներին, որքան էլ որ Պապիկյանը հայտարարի, թե զինծառայողների քանակն այս որոշումից չի փոխվելու:

Ուշագրավ է, որ ընդդիմադիրներն էլ են կաշկանդված այս նախագծի հարցում եւ բաց չեն խոսում այս խնդիրների մասին՝ վախենալով արժանանալ հայոց մայրերի անեծքին: Նախօրեին պաշտպանության հանձնաժողովում նրանք անգամ չմասնակցեցին նախագծի քվեարկությանը, դիրքորոշում չարտահայտեցին՝ կողմ են, թե դեմ՝ տրվելով պոպուլիզմին: Ընդդիմության այս պահվածքից ոգեւորված, կան խոսակցություններ, որ որոշ ժամանակ հետո ՔՊ-ն մեկ այլ առաջարկով է հանդես գալու՝ բանակը մեկ տարի դարձնելու մասին, գուցե այդ առաջարկը կյանքի չկոչվի, բայց հաստատ «կաշխատի» նախընտրական շրջանում:

Ինչեւէ, ՊՆ մեր աղբյուրները պատմում են նաեւ, որ համեստ պահվածքով աչքի ընկած երբեմնի պատմության ուսուցիչ Պապիկյանից այսօր ոչինչ չի մնացել: Ոչ միայն նրա արտաքինն է շատ փոխվել՝ գիրացել, հայացքը խստացել, քայլվածքը փոխվել, այլեւ իր ենթակաների հետ հիմա խոսում է ակնհայտ քամահրանքով: Հատկապես, երբ որեւէ մեկին դիտողություն է անում, ասում են, որ դա անում է դիմացինին ծաղրելով, ձեռք առնելով:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀԱՄԵ

ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆԻՍԿ ՌԻՍԿԵՐԸ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼ, ՈՒՐ ՄՆԱՑ՝ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԴՆԻ

«Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ)՝ նոյեմբերի 27-ին Բիշքեկում անցկացվելիք գագաթնաժողովին չեն մասնակցի»,- հայտարարել է Ռուսաստանի նախագահի օգնական Յուրի Ուշակովը: «Ինչ վերաբերում է Հայաստանին, այդ երկիրը չի մասնակցի, սակայն նրա ներկայացուցիչները կազմակերպիչներին տեղեկացրել են, որ հանդիպման ժամանակ համաձայնեցված փաստաթղթերի ընդունմանը դեմ չեն»,- լրագրողների հետ զրույցում ասել է Ուշակովը: ՀԱՊԿ հաջորդ գագաթնաժողովը կանցկացվի 2026 թ. նոյեմբերի 11-ին, Մոսկվայում: Որոշում կընդունվի կազմակերպության նախագահությունը Ռուսաստանի Դաշնությանը փոխանցելու վերաբերյալ, որն ուժի մեջ կմտնի 2027 թվականի հունվարի 1-ից: Տեղեկություններ կան, որ Ադրբեջանը, խաղաղության պայմանագրի կնքմանը զուգահեռ, ըստ էության, կապիտուլյացիոն պահանջներ է ներկայացրել Հայաստանին՝ գրեթե նույնանման պահանջներ, ինչպիսիք այսօր քննարկվում են Ռուսաստան-Ուկրաինա հրադադարի կնքման բանակցություններում: Դրանք են՝ բացառել Հայաստանի անդամակցությունը ցանկացած ռազմական միավորի՝ ՀԱՊԿ, ՆԱՏՕ եւ այլն: Կրճատել Հայկական բանակում զինվորականների թիվը, ապառազմականացնել Հայաստանը, ինչպես նաեւ փոխել Հայաստանի գործող Սահմանադրությունը՝ նրանից հանելով Անկախության հռչակագիրը: Քաղաքագետ **Սուրեն Սուրենյանցին** «Հրապարակը» հարցրեց՝ ինչ գնահատական ունի այս իրողություններին, եւ ինչու է Հայաստանն առանց պատերազմի նոր կապիտուլյացիայի գնում, ըստ էության:

Սուրենյանցը, անդրադառնալով նախ ՀԱՊԿ գագաթնաժողովին Հայաստանի հավանական բացակայությանը, նկատեց. «Ես սկզբունքորեն չեմ կարողանում հասկանալ այս կիսատ-պռատությունը, ինչու՞, որովհետեւ ցանկացած պետություն եթե կարծում է, որ ինչ-որ մի անվտանգության համակարգ չի համապատասխանում իր շահերին, ապա դուրս է գալիս եւ հեռանում: Սակայն այստեղ շատ կարեւոր է, որ տվյալ պետությունն ունենա անվտանգային հստակ երաշխիքներ՝ այլ տեղից: Հայաստանը նման երաշխիքներ չունի: Մեզ աշխարհի որեւիցե երկիր չի պատրաստվում անվտանգության երաշխիքներ տրամադրել: Իհարկե, ՀԱՊԿ-ը, առհասարակ՝ ռուսական հովանոցը իդեալական չեն, եւ բազմաթիվ հարցերում մենք այդ կառույցներից շատ դժգոհ ենք, բայց մենք ոչ թե ՀԱՊԿ-ը պետք է համեմատենք իդեալական անվտանգային համակարգերի հետ՝ մեր երեւակայության մեջ գոյություն ունեցող, որն իրականում գոյություն չունի, այլ ՀԱՊԿ-ը պետք է համեմատենք այն հնարավոր իրողության հետ, որ մի օր կարող է չլինել... Կարծում եմ, որ Հայաստանը պետք է վերադառնա ՀԱՊԿ, որովհետեւ չկա այլընտրանք: Հայաստանի նման ցածր սուբյեկտայնություն ունեցող պետությունը չի կարող ինքնուրույն լուծել իր անվտանգային խնդիրները, մեր պետության առջեւ կանգնած մարտահրավերները՝ նույնպես: Հետեւաբար, եթե Ադրբեջանը պահանջում է, որ մենք որեւէ ռազմաքաղաքական դաշինքի մաս չկազմենք, ապա դա թարգմանաբար նշանակում է, որ Ալիեւը մեզնից պահանջում է ընդունել ադրբեջանական վասալի կարգավիճակը: Գուցե ամեն ինչ հենց դրան է տանում: Ավելի պարզ բառերով ասեմ, որ մեր ընթերցողի համար առավել հստակ լինի. ռուսական անվտանգային համակարգը մերժելով՝ Հայաստանը չի գնում դեպի Արեւմուտք, այլ հայտնվում է թուրք-ադրբեջանական աքցանի մեջ, դրանից բխող բոլոր հետեւանքներով: Հետեւաբար տրամաբանական է, որ այս մոտեցումը կարող է հենց ադրբեջանական թելադրանքով լինել: Հայկական կողմը փաստացի չի կարողանում պահանջներ դնել, դա գիտեն եւ տեսել են բոլորը: Մենք ունենք մի իշխանություն, որը նույնիսկ ռիսկերը չի կարողանում կառավարել, էլ ուր մնաց՝ պահանջներ ունենա: Հայաստանը պետք է երկու բան անի. անվտանգային համակարգում՝ ՀԱՊԿ-ում ակտիվացնի իր գործունեությունը, ինչպես նաեւ՝ Հայաստանի ներսում ուժեղացնի տնտեսությունը: Հայաստանի անելիքը հիմա դա պետք է լինի առնվազն»:

Ռազմական փորձագետ **Դավիթ Զամալյանն** էլ մեզ հետ զրույցում նույն թեմայի վերաբերյալ նշում է. «Միշտ առիթ ունեցել եմ ասելու եւ նորից եմ ասում՝ ՀԱՊԿ-ը մեզ համար եղել է մեր անվտանգության ապահովման հավելյալ գործիքը: ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցության ներքին մոտիվացիան, այն, ինչն իսկապես մեզ տվել է ՀԱՊԿ-ին անդամակցելը, եղել է նախեւառաջ շատ մատչելի գներով, նույնիսկ՝ անվճար սպառազինություն ձեռք բերելը: Քանի որ ռուսակենտրոն աշխարհաքաղաքական միավոր է Հայաստանը, Ռուսաստանը միշտ էլ փոխադարձության տրամաբանության մեջ դրել է այն հարցը, որ Հայաստանը լեգիտիմ մասնակցություն ունենա ՀԱՊԿ-ի կազմում: Անդամակցելով ՀԱՊԿ-ին՝ մենք մի շարք հարցերում ռեալ շահող ենք եղել: Էժան եւ մատչելի ժամանակից զենքեր ենք ձեռք բերել: Շատ կարեւոր են զորավարժությունները, որոնք արվել են համատեղ, ինչը մեծ փորձ է տալիս բանակին ու միմիայն օգուտ: Անդամակցելով, մենք ունեցել ենք վստահություն, որ Ղազախստանը եւ Ղրղզստանը գալու են մեր փոխարեն կռվելու, երբեւէ չենք համարել իրատեսական եւ չենք ապրել նման պատրանքներով: Այս հանգամանքները, որպես խոչընդոտ, Արեւմուտքից կաշառվածները ներկայացնում են իբրեւ մի մեծ բաց: Այս ոչ լեգիտիմ խմբակը ցանկանում է դադարեցնել համագործակցությունը ՀԱՊԿ-ի հետ, իսկ մենք ի՞նչ ենք ստանում դրա դիմաց. ստանում ենք ավելի անպաշտպան Հայաստան: ՀԱՊԿ-ին հարվածել՝ նշանակում է հարվածել Ռուսաստանին: ՀԱՊԿ-ը 2022 թվականին առաջարկում էր սպառազինություն, որից Հայաստանը հրաժարվել է՝ մի անմիտ պատճառաբանությամբ: Հետո Ֆրանսիայի հետ իբրեւ սկսեցին համագործակցել, սակայն ոչ մի պահանջ չդրեցին Ֆրանսիայի առաջ, ինչպես փորձում են անել ՌԴ-ի պարագայում: Այս մոտեցմամբ Հայաստանը բացառապես տուժում է, մեզ զրկում են հնարավորություններից, գլուխ են գովում, թե չգիտես որտեղից ինչ են բերել, բայց մի հարցնող լինի՝ ի՞նչ գներով եք բերում՝ թանկ գներով: Ի՞նչ է սա, եթե ոչ պետական միջոցների վատնում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆՆ ԸՆԴԱՄԵՆԸ ՓՐԿՈՒՄ ԷՐ ԿՆՈՋ ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

2025 թվականի հուլիսի 17-ին՝ Սամվել Կարապետյանի հայտնի հայտարարությունից ու դրան հաջորդած՝ Նիկոլ Փաշինյանի «ֆեյսբուքյան արդարադատությունից» անմիջապես հետո ԱԺ-ում ՀԷՑ-ի մասին հանկարծ «հիշեց» նաեւ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: Նա առանձնապես ագրեսիվ էր ՀԷՑ-ի եւ Սամվել Կարապետյանի հասցեին: Սակայն Կոնջորյանի այդ պոռթկումը պայմանավորված էր ոչ միայն վերեւից իջեցված հանձնարարությամբ, այլեւ խիստ անձնական մղումներով եւ կապված էր իր կնոջ՝ «Հայփոստի» տնօրեն Շուշան Ալեքսանյանի գործունեության հետ:

Բանն այն է, որ 2025 թվականի գարնանը ՀԷՑ-ը դիմել էր «Հայփոստի» գլխավոր տնօրեն Շուշան Ալեքսանյանին՝ Կոնջորյանի կնոջը, առաջարկելով իջեցնել քաղաքացիներից էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց վարձավճարների ընդունման համար նախատեսված միջնորդավճարը եւ համապատասխանեցնել այն ՀՀ-ում գործող բանկերի կողմից նախատեսված միջնորդավճարին: Օրինակ, մարզային քաղաքներում, պայմանական՝ Չարենցավանի ցանկացած բանկում ՀԷՑ-ի «կոմունալները» վճարելիս բանկը գանձում է 0,4 տոկոս միջնորդավճար, մինչդեռ «Հայփոստի» նույն Չարենցավանի փոստային մասնաճյուղում վճարում կատարելիս միջնորդավճարը կազմում է 2,5 անգամ ավելի՝ 1%:

ՀԷՑ-ը «Հայփոստի» տնօրենին առաջարկել էր իրենց միջնորդավճարն էլ իջեցնել ՀՀ բանկերի կողմից առաջարկվող միջնորդավճարի մակարդակին: «Հայփոստի» միջնորդավճարի իջեցման շնորհիվ երկրի էներգետիկ համակարգում կտնտեսվեր տարեկան մինչեւ 200 մլն դրամ, ինչն իր դրական ազդեցությունը կունենար էլեկտրաէներգիայի սակագնի ընդհանուր հաշվարկի մեջ: Սակայն «Հայփոստի» միջնորդավճարի իջեցումը եւ համապատասխանեցումը շուկայականին, ըստ ամենայնի, մտահոգել է Կոնջորյանի կնոջը, որը հաշվարկել է, որ այդ դեպքում առանց այն էլ վատ կառավարման արդյունքում ծանր ֆինանսական վիճակում գտնվող «Հայփոստի» բյուջեում մոտ 200 մլն դրամի դեֆիցիտ է առաջանալու, ինչի պատճառով ստիպված են լինելու սեղմել գոտիները եւ կրճատել ծախսերը, մասնավորապես՝ տնօրինության աստղաբաշխական աշխատավարձը, ինչպես նաեւ հրաժարվեն այլ ընթացիկ ճոխություններից եւ ճանապարհորդության նմանվող արտասահմանյան գործուղումներից: Ուստի ՀԷՑ-ի առաջարկության քննարկումը, որը նպաստելու էր համակարգում խնայողություններ ապահովելուն, Կոնջորյանի կնոջ կողմից արհեստականորեն ձգձգվում էր, եւ ՀԷՑ-ի ազգայնացումը հարմար առիթ էր Կոնջորյան ընտանիքի համար՝ տապալելու այս նախաձեռնությունը:

ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարչի նշանակումից հետո, ըստ մեր աղբյուրների, Կոնջորյանին, ենթադրաբար, հաջողվել է պայմանավորվել ՀԷՑ-ի նոր կառավարչի հետ, ինչի արդյունքում նշված առաջարկի քննարկումը վիժեցվել է՝ էներգահամակարգին զրկելով մոտ 200 մլն դրամի պոտենցիալ խնայողությունից: Այսինքն, ՀԷՑ բաժանորդները՝ ՀՀ քաղաքացիները, անուղղակիորեն շարունակելու են ֆինանսավորել Կոնջորյանի կնոջ աստղաբաշխական աշխատավարձը եւ փարիզյան վոյաժները:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻ

Կիրակի օրը Վազգեն Սարգսյանի հարազատ գյուղում՝ Արարատի Սուրբ Հակոբ եկեղեցում կատարվող պատարագին մասնակցում էին նաեւ Նիկոլ Փաշինյանը եւ Վազգեն Սարգսյանի եղբայրը՝ Արամ Սարգսյանը: Բնականաբար, տարատեսակ կրոնական կազմակերպությունների հետեւորդները կրկին ուղեկցում էին Փաշինյանին. նրանք եղել էին Հովհաննավանքի «պատարագին», ապա՝ Թալինի, հետո՝ Խաչիկի: Վերջին պատարագին ներկա էր նաեւ Մասյացոտն թեմի առաջնորդ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը, որի ներկայությամբ պատարագը վարող քահանան՝ Երվանդ Բաբայանը, ոչ միայն եկեղեցու միասնության աղոթքը չարեց, այլեւ չհիշատակեց Վեհափառի անունը, ինչը պատարագի կարգի կոպտագույն խախտում է: Հիշեցնենք, որ Հայ առաքելական սուրբ եկեղեցու կանոնագրքով, եթե Վեհափառի անունը չի հիշատակվում, կամ պատարագի կարգը խախտվում է ընդհանրապես, ապա դա արդեն պատճառ է, որպեսզի այդ դեպքը քննության առնվի, միտումնավոր շեղումների դեպքում նաեւ լուրջ քննարկման եւ կարգալույծ հռչակելու առիթ է:

Դրանք կարող են հանգեցնել նաեւ Հոգեւոր դատարանի գործունեության դադարեցմանը: Ինչպես հայտնի է, Հոգեւոր դատարանի գործունեությունը դադարեցվեց 2018 թվականին, երբ Գարեգին Բ կաթողիկոսի հրամանագրով ստեղծվեց նոր կազմ, որի մեջ ներառվեցին Գարեգին Բ կաթողիկոսի, Գարեգին Ա կաթողիկոսի եւ Գարեգին Նժդեհի ներկայացուցիչներ: Ինչպես հայտնի է, Գարեգին Նժդեհի ներկայացուցիչ Գեւորգ Սարոյանը հրաժարվեց մասնակցել Հոգեւոր դատարանի նիստերին, ինչպես նաեւ հրաժարվեց ստանձնել Հոգեւոր դատարանի նախագահի պաշտոնը

ՎԻՃԱԿ

ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ՀԱՂԹԵԼ ԱՅՍ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Ասել, որ ՔՊ-ի հանդեպ մի առանձնահատուկ սեր կա ժողովրդի մեջ, մեղմ ասած, հիմարություն է: Հայ ժողովուրդը կամ որեւէ ժողովուրդ չի կարող այնքան հիմար լինել, որ մեկ անգամ սխալվելուց, երկրորդ անգամ սխալվելուց հետո տրամադրվի սխալվել նաեւ երրորդ անգամ: Ես չգիտեմ, թե իր զարգացման որ աստիճանում պետք է մնացած լինի այն հայը, ռուսը, ամերիկացին, ֆրանսիացին, ղազախը, ույղուրը, որ մի քանի տարի շարունակ ճաշակի իր ընտրած կառավարության պատճառած ավերներն ու շարունակի սիրել այդ կառավարությանը:

Բայց այլազգիներին թողնենք մի կողմ ու դառնանք մեզ՝ հայերիս: Մեր մի զգալի մասը, այո, առաջին անգամ սխալվելուց հետո դարձյալ քվե տվեց ՔՊ-ին (Նիկոլին): 680 հազար մարդ (թող ոչ ոք չհրաժարվի) գնաց ու ԱԺ արտահերթ ընտրություններում քվե տվեց քովիդի ժամանակ խայտառակված, 44-օրյա պատերազմում կասկածելի պարտություն արձանագրած եւ երկիրը փոսից հանելու սուտ խոստումներով մի կերպ ջրի երեսին մնացած կապիտուլյանտների իշխանությանը: 680 հազար մարդ... Բերանով ասելն է հեշտ: Երկրներ կան, որ նույնիսկ այդքան բնակչություն չունեն: Մեր պարագայում, երբ երկրի՝ ընտրելու իրավունք ունեցող բնակչության թիվը հազիվ գերազանցում է 2 միլիոնը, 680 հազար պոտենցիալ անասունի ներկայությունն արդեն իսկ ազգային անվտանգության խնդիր է: Ասում եմ՝ պոտենցիալ, որովհետեւ վստահ եմ, որ այդ թիվը չի պահպանվել: Բոլոր հարցումներն ասում են, որ ՔՊ-ն (Նիկոլը) մեծ ընտրազանգված է կորցրել այն ամենից հետո, ինչ տեղի է ունեցել այդ զանգվածի՝ երկրորդ անգամ սխալվելուց հետո:

Չէ՞ որ այս ընթացքում տեղի են ունեցել սարսափելի իրադարձություններ՝ Արցախից հրաժարում, ՀՀ սուվերեն տարածքների հանձնում (չթվարկեմ, բոլորը գիտեն), «Զանգեզուրի միջանցք», գլոբալ քաղաքական բլոկադա (թե՛ դաշնակիցների, թե՛ հակառակորդների շրջանում), հացի փոխարեն՝ անասնակեր, երեք մատի կոմբինացիա՝ բանակը վերազինելու մեր աղաչանքներին (ՔՊ-ն (Նիկոլը) անձամբ է խոստովանել), 8 միլիարդանոց պետական պարտքի 6.5 միլիարդի անհետացում... Ի՞նչ եք կարծում, պոտենցիալ անասունների թիվն ավելացա՞ծ կլինի այս ամենի ֆոնին, թե՞ նվազած: Ինձ թվում է՝ նվազել է եւ այն էլ՝ շատ: Այլապես ինչո՞ւ է Նիկոլն ընկած՝ ընտրազանգված «ավելացնում». արշավ Եկեղեցու դեմ, ձերբակալություններ ընդդիմադիրների շրջանում, լրատվամիջոցների ու լրագրողների անվանարկում, պետական ապարատի զորաշարժ, վախի մթնոլորտի ձեւավորում... Եթե կարճ, ապա ինչո՞ւ է ձեռքը գցել փրփուրներին եւ փորձում մի քանի ոչխար ավելացնել իր անհետացող հոտին:

2026թ. ԱԺ ընտրություններին ընդառաջ՝ ոչինչ չունեն ասելու: Մի բան են գցել բերանները՝ այդ ընտրություններում հաղթելու է ժողովուրդը: Այո, տհասներ, հաղթելու է ժողովուրդը, բայց ոչ պոտենցիալ անասունների այն զանգվածը, որ դեռ «խորհում» է ձեզ քվե տալ-չտալու հարցի շուրջ: Ի՞նչ ունի հայ ժողովուրդն այդ զանգվածին որպես հակակշիռ: Այս հարցին պատասխանելու համար նախեւառաջ պետք է հասկանալ, թե ինչից կամ ումից է կազմված պոտենցիալ կենդանիների զանգվածը, եւ արդյո՞ք այն կպահպանվի մինչեւ ընտրությունները: Այդ զանգվածի կազմը, ինչպես ցույց են տալիս ոչ այնքան խորքային ուսումնասիրությունները, բավականին խայտաբղետ է: Ով ասես՝ չկա այստեղ... Էլ կաստում-շլվարով բիրդան պաշտոնյաներ, էլ խաբված աշխատավորներ, որոնց Նիկոլը հավատացնում է, թե կարող են մինչեւ 700 հազար դրամ աշխատավարձ ստանալ, էլ գրոշները հաշվող թոշակառուներ, էլ բնակարան չստացած զինծառայողներ, էլ Անոյի (Նիկոլի) առողջապահության հույսին մնացած հավերժ հիվանդներ, էլ այս հասարակության մեջ իր ավելորդությունը զգացած ուսանողություն, էլ իրենց առաքելությունը մոռացած ուսուցիչներ, էլ գիտությունից օտարված բուհերի դասախոսներ... Էլ, էլ, էլ... Անգամ՝ տերտերներ, որոնց ՔՊ-ն (Նիկոլը) խոստացել էր կաթողիկոս դարձնել: Իսկ ինչո՞ւ այս խմբում չհիշել այն, այսպես կոչված, հայերին, որոնք, նախկինացավ կպած, այս թուրքահպատակ կառավարության (Նիկոլի) հորդորով ողջունեցին Արցախի կորուստը, որոնք թողեցին սահմանամերձ գյուղերում իրենց տներն ու թռան արտերկիր, որոնք այս պահին էլ մտածում են՝ անկլավները տանք, որ խաղաղ ապրենք, Սյունիքը տանք, որ խաղաղ ապրենք, Գյումրին տանք, Լոռին տանք, ամեն ինչ տանք, թուրքին բերենք Հայաստան, Սահմանադրություն փոխենք, որ խաղաղ ապրենք...

2021 թվականի ԱԺ արտահերթ ընտրություններից առաջ վերոնշյալ զանգվածի գլխաքանակը, պլյուս-մինուս՝ 680 հազար է եղել: Ասում են՝ նվազել է: Դա լավ է: Դա նշանակում է, որ ընտրելու իրավունք ունեցողների մի որոշակի մաս չի պատրաստվում երրորդ անգամ սխալվել: Այս հանգամանքը, կարծում եմ, պետք է ոգեւորի այն հայերին, որոնք իրենց անտարբերությամբ եւ համակերպվածությամբ արդեն 7 տարի, անհաղորդ ամեն ինչին, ապուշ կտրած, դիտում են, թե ինչպես է կործանվում Հայաստանի Հանրապետությունը: Կներեք, իհարկե, բայց այս կարգի անտարբերությունը երկրի, հայրենիքի, հայ ժողովրդի եւ սեփական ճակատագրի հանդեպ գրեթե ոչնչով նախընտրելի չէ պոտենցիալ անասնական վիճակից: Անտարբերների մեջ էլ քիչ չեն (գուցե նույնիսկ ավելի շատ են) կաստում-շլվարով նախկինները, օլիգարխ «ախպերները», դուքանչիները, լղոզվող մտավորականները, խոհանոցային հայրենասերները, փողի շատությունից ֆազերը «քցած» իրավապահները, դատավորները... Թվարկելով չի վերջանա: Անտարբեր մի եղեք, դա արդարացում չէ, դա ձեզ չի ներվելու: Չի ներվելու երբեք, անգամ եթե մի տխուր օր արթնանանք արդեն գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետությունում:

Եվ, ուրեմն, ի՞նչ ունենք մեր միջի այս զանգվածին հակադրելու համար: Ունենք մոտ 2 միլիոն հայություն, որ կարող է իր քվեով վերջ դնել այս նեխած վիճակին, ունենք մոտ 8 միլիոնանոց Սփյուռք, ունենք Հայ Առաքելական Եկեղեցի... Վերջապես՝ ունենք անհատներ, որոնք ի զորու են հայ ժողովրդի համախումբ պայքարը հասցնել իր նպատակին: Մենք այսպես ենք հաղթել բոլոր ժամանակներին:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԲՈԼՈՐԴ «ՆԻԿՈԼԻ ԴԵՄՔՈՎ ԵՔ», ՆԿԱՐՆ ԻՆՉՆԵՐԻՀ՞Դ Է ՊԵՏՔ

Հիշում եք, հավանաբար, որ 2018-ին իշխանության գալով՝ Փաշինյանը հրահանգեց բոլոր աշխատասենյակների պատերից հանել նկարները եւ խրոխտ՝ ժողովրդավարական առաջնորդի տարերքի մեջ հայտարարեց՝ այլեւս երբեք ՀՀ ղեկավարների նկարները պաշտոնյաների պատերին չեն փակցվելու: Ավելի հեռավոր ժամանակներում, ընդդիմադիր պատգամավոր Նիկոլն այցելել էր ՀՔԾ եւ վրդովվել, երբ նկատել էր պատին փակցված Սերժ Սարգսյանի մեծադիր լուսանկարը: Նա քննիչին հարցրել էր. «Դուք՝ որպես Հատուկ քննչական ծառայության քննիչ, անկախ եք, չէ՞: Բա Ձեր սենյակում ի՞նչ գործ ունի Սերժ Սարգսյանի դիմապատկերը»: «Անձի պաշտամունքի մոլի ախոյան» Փաշինյանն այնքան էր զայրացել, որ նույնիսկ այդ խնդրով գրավոր հարցումներ էր ուղղել ՀՔԾ այն ժամանակվա պետ Վահրամ Շահինյանին ու պատասխանները կարդացել 6-րդ գումարման ԱԺ նստաշրջանի մի քանի քառօրյաներին:

Այս պարզունակ ու ամբոխահաճո հնարքը, ժողովրդավարության պատրանքներ ցուցադրելը, ճիշտ է՝ զարմանալիորեն մի փոքր երկար տեւեց՝ մոտավորապես 3 տարի, բայց փաշինյանական հերթական փուչիկն ի վերջո «պայթեց»: 2021-ին իրար հետեւից ԱԺ-ում, տարբեր գերատեսչություններում սկսվեց Փաշինյանի լուսանկարի «շռնդալից երթը»: Հետո հնչեցին իշխանականների «ինքնախոստովանական ցուցմունքները», թե բա՝ այդ գործընթացը կամավոր է, ինքնաբուխ, որեւէ պարտադրանք չկա: Օրինակ, այդ ժամանակ կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, անդրադառնալով տարբեր գերատեսչություններում պաշտոնյաների աշխատասենյակներում Նիկոլ Փաշինյանի լուսանկարը փակցնելուն եւ նախկինում Սերժ Սարգսյանի նկարն աշխատասենյակներում կախելը Փաշինյանի կողմից քննադատվելուն, ասաց. «Ի տարբերություն Սերժ Սարգսյանի, Նիկոլ Փաշինյանն ընտրված առաջնորդ է»:

Նույն օրերին ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը լրագրողների հետ ճեպազրույցում ավելի անկեղծ էր եւ նշեց, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի լուսանկարն իր աշխատասենյակում էլ է փակցված, քանի որ կարգն է այդպես: «Այո, փակցված է ՀՀ վարչապետի լուսանկարը, որովհետեւ այդպիսին է սահմանված նոր կարգը, այդպիսի ընթացակարգեր կան: Որեւէ օրենսդրական կարգավորում չկա, ուղղակի այդպես է հիմա ընդունված, եւ այդ կարգը պահպանվում է: Բնականաբար, կառավարությունում է որոշվել այդ կարգը»: Եվ կրկին պարզվեց, որ հենց Փաշինյանն է տվել նման «դաբրո», ավելի ճիշտ՝ նա է պարտադրել, եւ կառավարության նախաձեռնությամբ է պաշտոնյաներին պարտադրվում աշխատասենյակների պատերը զարդարել վարչապետի նկարով: Այդպիսով Փաշինյանը փաստացի կառավարությունից իջեցված հրահանգի մակարդակով առաջ մղեց սեփական անձի պաշտամունքը: Օրերս էլ միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Կարեն Անդրեասյանը, որը նախկինում՝ 2021-ին, արդարադատության նախարարի կարգավիճակում «սիրո խոստովանություն» էր արել Փաշինյանի լուսանկարին, թե ոգեշնչվում է այդ նկարին նայելիս, այժմ լրագրողների հետ զրույցում ասում է, որ Նիկոլ Փաշինյանի լուսանկարը հիմա չկա իր նոր աշխատասենյակում: Ըստ նրա՝ պատճառն այն է, որ նախարարի պաշտոնը քաղաքական պաշտոն էր, իսկ 22-ից հետո ինքը զբաղեցնում է ապաքաղաքական պաշտոններ, որը չի ենթադրում Փաշինյանի լուսանկարը փակցնել աշխատավայրում: Բայց արժե հիշել նրա հին խոստովանությունը. «Նիկոլ Փաշինյանը մեր ղեկավարն է. ընդհանրապես, պետության ղեկավարի լուսանկարը խորհրդանիշ է: Այո, նաեւ լինում է ժամանակ, երբ աշխատանքային գործունեության ժամանակ նայելով լուսանկարին՝ հիշում եմ, որ պետք է լինել ազնիվ, անաչառ եւ պահպանել այն բոլոր պահանջները, որ մեր առաջ դրել է վարչապետը»:

Անկախ Փաշինյանի՝ «կառավարությունը ես եմ» բռնապետական, հակաժողովրդական հայտարարությունից՝ կարիք չկա վերստին փաստելու, որ դրանք ոչ միայն խոսքեր են, այլեւ գործող օրինաչափություն, որին լծված է ամբողջ իշխանական համակարգը՝ իր մանրումեծ տրամաչափի գործիչներով եւ ոչ միայն: Կարճ ասած, որեւէ պաշտոնյա, առանձին վերցված, Նիկոլի դեմքով, Նիկոլի խոսույթով, Նիկոլի հավատամքով մեկն է: Բոլորը նույն Նիկոլն են: Եվ շեֆի լուսանկարն իրենց աշխատասենյակների պատերին փակցնելը մի տեսակ կորցրել է արդիականությունը, չէ՞ որ բոլորը նույն Նիկոլն են՝ տարբեր աշխատասենյակներում ու տարբեր դեմքերով, կամ թեւավոր դարձած խոսքով՝ «Նիկոլի ուսապարկներն են»:

Արա ԱԼՈՅԱՆ

ՍՈՑՍՈ

ԲՅՈՒԼԵՏԵՆ ԲԱՑԵԼՈՒ ՈՒ ՄԱՅՐԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎԱՏ է ԱՇԽԱՏՈՒՄ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Ժամանակավոր անաշխատունակության հաշվարկման նոր համակարգը գործարկվել է սեպտեմբերից եւ արդեն հասցրել է բազմաթիվ քաղաքացիների դժգոհությունն առաջացնել:

Նախկին կարգը պարզ էր ու հասկանալի. հիվանդության դեպքում սովետից եկած «բյուլետեն» ստանալով, մարդն այն ներկայացնում էր գործատուին, եւ նրա բացակայության օրերի համար գումար չէր պահվում:

Այսօր անաշխատունակության թերթիկը բացվում է առցանց, էլեկտրոնային եղանակով պոլիկլինիկայի կամ հիվանդանոցի կողմից եւ հասանելի է Միասնական սոցիալական ծառայության համար: Կառավարությունը սա որպես մեծ առաջընթաց է ներկայացնում: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարները՝ Նարեկ Մկրտչյանը, որի օրոք փոփոխությունը նախատեսվել է, ներկայիս նախարար Արսեն Թորոսյանը, հարցազրույցներում ու ելույթներում շեշտում էին, որ աշխատողն այսպիսով ազատվում է թուղթ տանել-բերելու անհրաժեշտությունից: Այս «առավելությունը» նախկին կարգի համեմատ առայժմ հասկանալի չէ՝ անաշխատունակության թերթիկը «բացվում» էր բժշկին դիմելու պահից, իսկ գործատուին էր տրվում այն օրը, երբ աշխատողը գնում էր աշխատանքի, այնպես որ՝ թղթեր երկար տանել-բերելու կարիք չկար: Ավելի էական են նոր կարգի թերությունները՝ հասկանալի չէ հաշվարկի մեխանիզմը, մարդիկ չեն ստանում իրենց հասանելիք գումարները, նոր կարգը խրթին է:

Նախկին օրենքով, ժամանակավորապես անաշխատունակը հիվանդության օրերի համար ստանում էր հասանելիք աշխատավարձի 80 տոկոսը: Այսօր էլ նույն 80 տոկոսն են ստանում, բայց արի ու տես, որ արդեն կան բազմաթիվ մարդիկ, ովքեր չնչին կոպեկներ, սիմվոլիկ գումար են ստացել: Մեզ դիմած քաղաքացի Նաիրի Գ.-ի կինը ծանր հիվանդության պատճառով մոտ երկու ամիս չի կարողացել աշխատանքի գնալ: «Վճարումը չի համապատասխանել նրա երկու ամսվա աշխատավարձի 80 տոկոսին: Նույնն էլ այլ աշխատողների հետ է եղել, անկախ բացակայելու օրերից: Կամ վճարում են, կամ չեն վճարում, կամ ահավոր քիչ են վճարում: Անհասկանալի համակարգ է: Խնդրում եմ, օգնեք՝ պարզաբանում ստանալ, թե ինչպես է կատարվում հիմա վճարումը»,- ասում է տղամարդը:

Ըստ նոր կարգի, մեխանիզմը հետեւյալն է. անաշխատունակության դեպքում, այդ թվում՝ հղիության եւ ծննդաբերության հիմքով բացված, անձը դիմում է հիվանդանոց կամ պոլիկլինիկա: Տվյալ բուժհաստատությունը նրա անվամբ ստեղծում է էլեկտրոնային անաշխատունակության թերթիկ, որը հասանելի է պետական մարմիններին՝ ՊԵԿ-ին եւ Միասնական սոցիալական ծառայությանը: Համակարգիչը հաշվարկում է ՀՀ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը, իսկ գործատուի միջոցներից վճարման ենթակա գումարի վերաբերյալ տեղեկատվությունը ՊԵԿ-ի միջոցով փոխանցվում է գործատուին, որը վճարում է աշխատողին՝ գումարը «նստեցնելով» նրա քարտին: Ո՞րն է պատճառը, որ նորույթը, որը պետք է հեշտացներ մարդկանց կյանքը, իրականում ավելի է բարդացրել: Մեր հարցերին պատասխանեց Կենսաթոշակային ապահովության եւ այլ դրամական վճարների վարչության պետ **Անահիտ Գալստյանը**: Ասաց, որ հիվանդության դեպքում հիմա էլ են աշխատողներն անաշխատունակության թերթիկ ներկայացնելով, ստանում միջին աշխատավարձի 80 տոկոսը՝ այնտեղ նշված օրերի համար: «Կարծում եմ, խնդիրն այն է, որ մենք ունենք մի փոքր տեխնիկական խնդիրներ: Որոշակի տվյալներ չեն ստացվում, եւ, հետեւապես, միջին ամսականի եկամտով չեն հաշվարկվում: Օրենսդրությունը նախատեսում է նման դեպքերում վերահաշվարկի մեխանիզմ: Այդ խնդիրները երբ որ կարգավորվեն, բոլորն անպայման վերահաշվարկ են անցնելու, եւ այդ պակասորդ գումարները վճարելու ենք»,- ասաց նա:

- Աշխատողն ումի՞ց է ստանում իրեն հասանելիք վճարը, գործատուի՞ց, թե՞ պետությունից:

- Գործատուից, հետագայում գումարի մի մասը գործատուն ստանում է պետությունից: Ենթադրենք, աշխատողը 20 օրվա բյուլետեն է տարել, այդ բոլոր 20 օրերի համար գործատուն նրան կվճարի միանվագ, հետո 15 օրվա վճարը գործատուն կստանա բյուջեից: Նախկինում գործատուն մեկ վճարում էր, մեկ չէր վճարում, փոքր ու միջին բիզնեսում վճարման հետ կապված խնդիրներ կային, բյուլետեն չէին ընդունում: Այս ամենից ելնելով, որոշում կայացվեց, որ պետական նպաստը պետական մարմինն էլ թող վճարի:

- Իսկ հիմա չունե՞ք նման բողոքներ:

- Ես մեր ահազանգերից կարող եմ ենթադրել, որ չկան նման դեպքեր: Նախկինում մանր ու միջին գործատուները հիմնականում խուսափում էին նպաստը վճարելուց, մանավանդ՝ մայրության նպաստը:

- Մայրության նպաստի հաշվարկման հարցում փոփոխություն եղե՞լ է:

- Ոչ: Հիվանդության նպաստի վճարման հարցում մի փոքր փոփոխություն կա: Առաջ աշխատանքային օրերով էինք վճարում, հիմա՝ օրացուցային օրերով: Առաջ շաբաթ-կիրակիները հանում էինք, էն ժամանակ հնգօրյա շաբաթի դեպքում միջին օրացուցային թիվը 21 օր էր, վեցօրյայի դեպքում՝ 24 օր, իսկ հիմա միջին օրերի թիվը 34 օր է:

- Ինչո՞ւ է համակարգը թերի գործում, փորձարկում չի՞ եղել:

- Փորձարկումներ եղել են, իհարկե, բայց իրական ռեժիմում ծագեցին հարցեր, որոնք փորձարկման փուլում չէին եղել:

- Ձեր աշխատողները չե՞ն կարողանում օնլայն թերթիկ լրացնել:

- Եկեք նեղ գերատեսչական բաներ Ձեզ չասեմ, կարեւորը՝ խնդիրները ֆիքսել ենք, լուծումների վրա աշխատում ենք:

Անահիտ Գալստյանը խոստանում է, որ խնդիրները հնարավորինս արագ կլուծվեն, եւ քաղաքացիները կստանան իրենց չստացած գումարները: Իսկ մինչ այդ նախարարությունն իր ֆեյսբուքյան էջի միջոցով կոչ է անում քաղաքացիներին՝ հայտնել ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների ստացման հետ կապված բարդությունների մասին:

5 ՁՈՎ, ԲԱՑՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՆԵՐ. ԻՐԱՆՑԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ է 4,5 ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

1970 թ. ծնված, հնգամյա կրթությամբ, ամուսնացած, խնամքին երեք անչափահաս երեխա ունեցող, նախկինում չդատված, Իրանի Թեհրան քաղաքում հաշվառված, Երեւանի Կոմիտասի փողոցում բնակվող Հաֆեզ Ղահրեմանի Հաբիբը, 2024 թ. ապրիլի 27-ին, ժամը 17-ի սահմաններում, սթափ վիճակում, Կապան համայնքի Վերին Խոտանան գյուղի հարակից ճանապարհահատվածում վարելով «Սկանյա» մակնիշի ավտոմեքենան, խախտել է ճանապարհային երթեւեկության կանոնների 66-րդ կետով, «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով եւ 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջները. վայրէջքային ճանապարհահատվածներն անցնելու ընթացքում ընտրել է շարժման այնպիսի ռեժիմ՝ ավտոբուսի ընթացքի արագության կարգավորումն իրականացնելով այնպես (ընթացքի արագության կարգավորումն իրականացնելով բանվորական (ոտքի) արգելակային համակարգի միջոցով, որը չի բխել ավտոբուսի տեխնիկական շահագործման հրահանգների պահանջներից), այն է՝ կատարելով անընդմեջ արգելակումներ եւ դրա արդյունքում տրանսպորտային միջոցի անվային արգելակային մեխանիզմները հասցնելով գերտաքացման ու, դրանով իսկ, հանգեցնելով դրա արգելակային համակարգերի անարդյունավետության լրիվ անկման, այն է՝ դրանց անաշխատունակության առաջացմանը, ինչը վտանգավոր է եղել երթեւեկության, մասնավորապես՝ իր իսկ երթեւեկության համար: Դրանով իսկ պայմանավորված՝ ճանապարհատրանսպորտային պատահար է տեղի ունեցել, քանի որ ինքն իրեն զրկել է վթարը կանխելու տեխնիկական հնարավորությունից:

Դրա հետեւանքով ավտոբուսը դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց ու գլորվել հարակից ձորը, ինչն առաջացրել է ուղեւորներ Մեհրուդ Յուսիեֆի, Ամջադի Սեյեդ Մանսուր Աբբասի, Արաշ Նադեհի, Մեհրան Հուշիյարի, Կատայուն Մահբուբ Սանսարայի մահը, Սամա Բազմարայի, Էդմոն Բաբաջանյանի, Մահրուդ Չոչարիի, Շահանդուխտ Յուսուֆի, Այդար Անվել Անուրո Ալբո Միքայելի առողջությանն անզգուշությամբ պատճառել է միջին ծանրության վնաս, Փեիման Ակբարիի, Հեյդար Քահրեմանիի առողջությանն անզգուշությամբ պատճառել է թեթեւ վնաս, իսկ Մեհդի Զախարիի, Ալի Նուրիի, Ֆահիմե Էսմայիլի, Ազիմի Դիզիդաջի առողջությանն անզգուշությամբ պատճառել է թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Հաֆեզ Հաբիբի Ղահրեմանիին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով, խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը: Նախնական դատալսումների ժամանակ Հաֆեզ Հաբիբի Ղահրեմանին եւ նրա պաշտպանը ներկայացրել են արագացված վարույթ կիրառելու միջնորդություն: Դատարանը բավարարել է միջնորդությունը եւ նշանակել լրացուցիչ դատալսումներ:

2025թ. հունիսի 17-ին Գորիս քաղաքում Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Հրաչ Դաջունցը Հաֆեզ Հաբիբի Ղահրեմանիին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ եւ որպես պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 տարի 6 ամիս ժամկետով, Քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատժին հաշվակցել է նրա՝ փաստացի անազատության մեջ գտնվելու 3 օրը եւ պատիժ սահմանել ազատազրկում՝ 4 տարի 5 ամիս 27 օր ժամկետով: Մեղադրող Հայկանուշ Բաղդասարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով բեկանել եւ պատժի մասով փոփոխել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը:

Ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի՝ հոկտեմբերի 1-ին քրեական գործերով վերաքննիչ դատարանը որոշել է վերաքննիչ բողոքը մերժել, Հաֆեզ Հաբիբի Ղահրեմանիի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը թողնել անփոփոխ: Սույն որոշումը դատախազությունն արդեն չի բողոքարկել վճռաբեկ դատարան, եւ այն մտել է օրինական ուժի մեջ:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՊԱՏԿԱՌ ԼԵԶՎԱԿՌԻՎԸ, ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՃԵՐԸ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Հիսուս Քրիստոսի, նրա աշակերտների, մարգարեների, Պապ թագավորի հետ համեմատվելու՝ ՀՀ գործադիր իշխանության ղեկավարի մեծամտական մոլուցքն օրերս կանգ առավ Կոնրադ Ադենաուերի վրա: Տարածաշրջանային համագործակցության թեմայով Ադենաուերի անվան հիմնադրամի քննարկմանն ունեցած ելույթում նա փորձեց արդարացնել իր խայտառակ քաղաքական ուղեգիծը՝ այդ նպատակով օգտագործելով Ադենաուերի անունը: Ասաց՝ գերմանացիները հպարտանում են Ադենաուերի որդեգրած ռազմավարությամբ, այն համարում «իրենց պետական եւ ազգային ինքնության կարեւոր մաս», բայց ժամանակին այն անվանում էին «խայտառակության ռազմավարություն»: Համաշխարհային մասշտաբի պետական գործչի հետ «ոտք մեկնելն» անհամեստություն է: Կոնրադ Ադենաուերը Գերմանիայի վերածննդի ճարտարապետն ու առաջնորդն է, նոր որակի պետականության խորհրդանիշը, եվրաինտեգրման հիմնադիրներից: Ուստի նման համեմատությունն առաջին իսկ հայացքից փլուզվում է, որովհետեւ չափորոշիչները, որոնց հիման վրա կառուցվել են նրա որոշումները, որեւէ աղերս չունեն Փաշինյանի քաղաքական վարքագծի հետ:

Ադենաուերի ղեկավարությամբ Գերմանիան վերածնվեց պատերազմի մոխիրներից եւ դա արեց արժանապատվորեն՝ առանց հոխորտանքի, անորոշության եւ բռնաճնշումների: Փաշինյանի կառավարումը պարտություններին չընդհատվող շարան է, երկիրն ու մարդիկ հայտնվել են խոցելի անվտանգության, ապատիայի, ապագայի նկատմամբ անվստահության մեջ: Քաղաքական պատասխանատվության փոխարեն նա հանրությանը մատուցում է անցյալ սխալների անբովանդակ հիշատակումներ ու վերացական արդարացումներ:

Ադենաուերը համարում էր, որ պետության արժանապատվությունը սկսվում է քաղաքացիներից, ուստի կարեւորում էր մարդկային իրավունքներն ու ազատությունները: Թեւավոր խոսք են դարձել նրա ասույթները. «Պետությունը գոյություն ունի մարդուն պաշտպանելու, ոչ թե ճնշելու համար», «Մեզ համար գոյություն ունի միայն իրավական պետություն, ժողովրդավարական պետություն»: Հայաստանի կառավարչի խոսքը մեղադրանք է, պիտակավորում, ծաղր, վիրավորանք, հայհոյանք: Այսկերպ դեռ ոչ մի պետություն չի պահպանել իր արժանապատվությունը:

Ադենաուեր՝ «Ինքնիշխանությունը մեզ համար բարձր արժեք է + պատրաստ ենք մեր ինքնիշխանությունը ներդնել ավելի մեծ եվրոպական միության մեջ»: Նա համոզված էր, որ ազգային պետությունը եւ եվրոպական համագործակցությունը չեն հակադրվում, այլ լրացնում են մեկը մյուսին:

Ադենաուերի խոսքը հատու էր. «Պետությունը չպետք է միջամտի եկեղեցու ներքին գործերին», «Հավատի ազատությունը ազատ հասարակության հիմնական պայմանն է»: Ի տարբերություն նացիստների՝ նա չի հետապնդել եկեղեցականներին եւ պաշտպանել է եկեղեցիների ազատությունը, ավելին՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության եւ Սուրբ Աթոռի միջեւ դիվանագիտական հարաբերություններն ինքը վերականգնեց: Նա կաթոլիկ էր եւ քրիստոնեական արժեքները համարում էր Գերմանիայի վերակառուցման հիմքը:

Հայաստանի կառավարիչը գլխավորում է Եկեղեցին վատաբանելու եւ պառակտելու արշավը, եկեղեցական կառույցների դեմ հարձակումները դարձրել է քաղաքական օրակարգ: Նա չի թաքցնում Եկեղեցու վրա քաղաքական վերահսկողություն հաստատելու իր մոլեռանդ ձգտումը:

Ադենաուերը պնդում էր. «Ազատ մամուլը ժողովրդավարության օրգանն է»: Նրա իշխանության տարիներին մամուլը գործում էր անարգել. քննադատում էր իշխանությանը, բայց երբեք չէր ենթարկվում հետապնդումների: Ճիշտ է, նա երբեմն վիճել է «չափազանց քննադատորեն տրամադրված» լրագրողների հետ, բայց՝ ոչ ավելին: Նա հավատարիմ էր իր սկզբունքին. «Մամուլի ազատությունը ժողովրդավարության հիմնասյուներից է», «Ազատ մամուլ չունեցող ժողովուրդը չի կարող ազատ լինել»:

Հայաստանում լրագրողների ու լրատվամիջոցների վարկաբեկումը, անպատկառ լեզվակռիվը, դատական վեճերը իշխանության հիմնական զբաղմունքն են դարձել:

Ադենաուերը փլատակներից վեր բարձրացրեց նոր Գերմանիայի տնտեսությունը, իսկ Փաշինյանը կուտակեց 8 մլրդ դոլարի ճիտին պարտք: Ադենաուերը Գերմանիան վերածեց ներդրումների կենտրոնի, տնտեսական աճի շարժիչը դարձրեց արդյունաբերությունը եւ ֆինանսական կարգապահությունը: Նա «գերմանական տնտեսական հրաշքի» հեղինակն է:

Հայաստանում տնտեսական քաղաքականության էությունը հարկերի ավելացումն է, հարկահավաքությունը, պետական ապարատի ընդլայնման ու սնուցման նպատակով նոր պարտքերի կուտակումը: Տնտեսական աննշան իրադարձությունները՝ ճանապարհաշինությունը, ընթացիկ վերանորոգումները, համայնքային սուբվենցիոն ծրագրերի ավարտը, ծառայեցվում են «հաջողության քարոզչությանը»:

Ադենաուերը պատմության մեջ մնաց որպես տնտեսություն վերականգնող, ազատություններ երաշխավորող, ազգային արժանապատվությունը պաշտպանող առաջնորդ, Փաշինյանը՝ միջազգային ասպարեզում թույլ, նահանջող, ընդդիմախոսներին «պադվալներ լցնող», ազատ խոսքն ու ազգային Եկեղեցին հալածող:

Ադենաուերի հիմնական շեշտադրումներն էին՝ Գերմանիան պետք է ճանաչի անցյալի մեղքերը, բայց չպետք է ընկնի նվաստացման կոմպլեքսի մեջ: Փաշինյանը քարոզում է խաղաղություն՝ ի գին պետական տարածքներից, ազգային հիշողությունից ու արժեքներից հրաժարման: Ադենաուերը շատ է անդրադարձել նացիստների թողած ծանր ժառանգությանը, նրանց գործած սխալներին: Նա զգայուն եւ զգոն վերաբերմունք էր ցուցաբերում նացիստական ռեժիմի զոհերի, հանցագործությունների եւ պատերազմից հետո Գերմանիայի պատասխանատվության հարցերում: Հանդես էր գալիս թե՛ որպես առաքյալ՝ ազնվությամբ ընդունելով ու խոսելով անցյալի մասին, թե՛ որպես պետության վերականգնման առաջնորդ՝ չլղոզելով պատմությունը: Բունդեստագում իր ելույթներից մեկում նա խոսել է «նացիստ հասարակության» համար պատասխանատվության մասին, ասել, որ պետք է հաշվի առնել՝ «երկրում հանցագործություններ են կատարվել» նացիստների կողմից, եւ ջանք գործադրել, որպեսզի հրեաների նկատմամբ գործած անիրավության դիմաց հնարավորինս արդար փոխհատուցում լինի: Պաշտպանել է իր ժողովրդին հախուռն հարձակումներից եւ ի լուր աշխարհի հայտարարել՝ ավելի շատ են եղել այն գերմանացիները, ովքեր չեն մասնակցել նացիստական հանցագործություններին: Նա «պատմության լրիվ մաքրագործման» կամ մեղավորներին անխնա պատժելու կողմնակից չի եղել: Ադենաուերը ցանկանում էր արագ առաջ տանել Գերմանիայի վերակառուցումը: Նրան քննադատել են այն պատճառով, որ «նախկին նացիստներին թույլ է տվել՝ ներգրավվել պետական կառույցներում», եւ որ «ոչ բոլոր մեղավորներն են ենթարկվել խիստ պատժի»: Որպես պետական առաջնորդ, Ադենաուերը ստեղծել է նոր Գերմանիա՝ կառուցված ոչ թե նացիզմի խորտակման, այլ ժողովրդավարության եւ օրենքի վրա:

Փաշինյանն անցյալի հետ «աշխատում» է մտասեւեռումներով եւ ունակ չէ գիտակցելու, որ մեր անցյալի սխալների հիմքում ոչ միայն համակարգային խնդիրներն ու գաղափարներն են եղել, այլեւ անհատական եւ հասարակական մակարդակներում բարոյական ու հոգեբանական խոցելիությունը, արժեքային սխալ ընտրությունը:



Արա ՍԱՀԱԿՅԱՆ

ԹԻՆԵՅՋԵՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՆԵՐ. ԻՆՉՊԵՍ Է ԺԱՆՐԸ ԾՆՎԵԼ

1955 թվականի հոկտեմբերի 27-ին էկրան բարձրացավ Նիկոլաս Ռեյի «Առանց պատճառի ապստամբողը»: Այժմ այն բազմաթիվ պատճառներով համարվում է կուլտային ժապավեն: Առաջին հերթին՝ թերեւս այն պատճառով, որ դարձավ առաջիններից մեկը հոլիվուդյան թին-դրամաների շարքում, որն առանց գունազարդումների սկսեց ներկայացնել նրբազգաց թինեյջերական՝ պատանեկան տարիքին հատուկ բոլոր խնդիրները: Երկրորդ, որ գլխավոր հերոս Ջեյմս Դինին դարձրեց 50-ականների իսկական «այքոն», թեեւ դերասանը ավտովթարում զոհվեց պրեմիերայից մեկ ամիս առաջ: Այսօր արդեն սթրիմինգային սերվիսները գերհագեցած են թինեյջերական պատմություններով, մինչդեռ 1990-ականներին հեռուստաէկրաններին միայն «Բեւերլի-հիլզ 90210»-ն էր կամ Էլենն ու ընկերները»: Վերջին երկու տասնամյակներին հանդիսատեսը հնարավորություն ունեցավ ծանոթանալու բրիտանական «Կաթնակերների», գլամուրային «Բամբասկոտի» ու «Վամպիրի օրագրերի» հետ: Ավելի ուշ արդեն ի հայտ եկավ պարզունակ, բայց բավականին դետեկտիվ «Ռիվերդեյլը», բուլինգի մասին սոցիալական դատողություններ պարունակող «13 պատճառ՝ ինչու-ի մասին»-ը, սեքսուալ-լուսավորչական «Սեռական դաստիարակությունը», գերնոր «Էյֆորիան», որը դարձավ կախվածությունների հակաքարոզչական նյութ: Խորհրդային իրականության մեջ այս ժանրին պատկանում էր Ռոլան Բիկովի «Խրտվիլակը», Կարեն Շահնազարովի «Կուրյերը», որն արձանագրում էր հատկապես սերունդների միջեւ եղած անջրպետանդունդը:

Շատ կարելի է խոսել թին-դրամաների, նրանց արծարծած թեմաների, առհասարակ՝ թինեյջերական խնդիրների՝ կինոյում արտացոլման մասին, սակայն ամեն ինչ, եթե անկեղծ լինենք, սկսվել է հենց Նիկոլաս Ռեյից: Նրա համար ներշնչանքի աղբյուր է եղել թերեւս Ժերոմ Սելինջերի «Անդունդի եզրին՝ տարեկանի արտում» գործը: «Առանց պատճառի ապստամբող»-ում Ջիմմի Սթարքը՝ գլխավոր հերոս Ջեյմս Դինի դերում, ներկայացնում է իր ժամանակի հերոսին: Ու կերպարն իրոք ստացված էր: Պատահական չէ, որ ֆիլմի էկրան բարձրանալուց հետո խանութներից անհետացան կապույտ ջինսե տաբատներն ու կարմիր վերնաշապիկները: Այդպես էր հագնված գլխավոր հերոս Ջեյմս Դինը՝ Ջիմմի Սքարքի մարմնավորմամբ: Գլխավոր հերոսը ստիպված էր հաճախակի փոխել բնակության վայրը: Այդպես վարվում էին ծնողները, որպեսզի իրենց որդուն հեռու պահեին տհաճություններից: Սակայն անհանգիստ տղան ուր էլ որ լիներ, գտնում էր տհաճություններ ու խրվում: Այս անգամ՝ հարբած վիճակում կռիվ է սարքում ու հայտնվում ոստիկանական բաժանմունքում: Այնտեղ նա հանդիպում է մի աղջկա՝ Ջուդի անունով, որը երեկոյան ուշ ժամերի դուրս էր գալիս զբոսանքի եւ կասկածվում էր մարմնավաճառությամբ զբաղվելու մեջ: Երկուսն էլ յուրօրինակ ապստամբներ էին ու միասին պետք է շատ վտանգավոր գործերի մեջ հայտնվեին, որն էլ բերում է ողբերգական հետեւանքների:



Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԽԼԵԼ ՀԷՑ-Ը ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԻՑ

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Փաշինյանը հերթական թատրոնն է բեմականացրել՝ իր եւ իր ենթակա Ռոմանոս Պետրոսյանի մասնակցությամբ, որին ապօրինաբար նշանակել է ՀԷՑ կառավարիչ: Նրա նպատակը ՀԷՑ-ը սեփականատիրոջից՝ Սամվել Կարապետյանից խլելն է: Որեւէ ապրանք խլել ասելով հասկանում ենք այդ ապրանքը սեփականատիրոջից ստիպողաբար վերցնելը, ապրանքի արժեքը նվազեցնելը՝ քիչ կամ ընդհանրապես չվճարելով դրա համար: Հիմա մենք գործ ունենք կոմբինացված տարբերակի հետ. Փաշինյանը կալանավորել է ՀԷՑ սեփականատիրոջը, նրան զրկելով իր սեփականությունը պաշտպանելու իրավունքից, այդ սեփականությունը կառավարելու համար նշանակել է իր ենթականերից մեկին եւ նրա հետ քննարկում է՝ ինչպես տնօրինել ուրիշի սեփականությունը:

Փաշինյանի համար իդեալականն այն կլիներ, որ կարողանար հայտարարել, թե պետականացնում-ազգայնացնում է ՀԷՑ-ը, Սամվել Կարապետյանին դրա դիմաց ոչինչ չի տալիս, որովհետեւ նրան չի հասնում ոչ մի փոխհատուցում: Բայց նման բան անելու համար Փաշինյանին ինչ-որ հիմնավորում է պետք: Պետք է «քցոցիի» համար հիմք սարքել-հորինել, ի վերջո՝ աշխարհում միջազգային արբիտրաժային դատարան, միջազգային տնտեսական իրավունք կա, Կարապետյանը նույնիսկ բանտում գտնվելով՝ իր ներկայացուցիչների միջոցով կարող է պաշտպանել իր իրավունքները: Կա նաեւ այլ հանգամանք. Կարապետյանը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է, նրա ունեցվածքը, սեփականությունը նաեւ Ռուսաստանի սեփականությունն է, եթե Փաշինյանը «քցում» է Կարապետյանին, ստացվում է, որ «քցում» է Ռուսաստանին, Կարապետյանը ՀԷՑ-ը գնել է Ռուսաստանում աշխատած կապիտալով: Պարզ է, որ ինքը դրանով կատարում է հավաքական Արեւմուտքի հրահանգը՝ ամեն ռուսական պետք է խլել, Ռուսաստանին պետք է ունեզրկել, այնտեղ էլ ուզում են Ռուսաստանի հաշիվներում եղած գումարները յուրացնել, բայց առայժմ չեն համարձակվում, ի վերջո՝ Ռուսաստանը կարող է մի օր հաշիվ պահանջել իր սեփականությունը խլելու համար. դրան դեռ կանդրադառնանք:

Փաշինյանը ՀԷՑ-ի կառավարիչ նշանակված իր ենթակային ասում է, որ կա ՀԷՑ-ի հետ կապված երկու տարբերակ. առաջին՝ ՀԷՑ-ը պետականացվում է եւ հանձնվում է հավատարմագրային կառավարման, բայց դրա համար պետական բյուջեից գումար պետք է վճարվի սեփականատիրոջը: Մյուսը՝ գտնում են ՀԷՑ-ի նոր գնորդ, վաճառում են, եւ նոր սեփականատերն է կառավարում ընկերությունը: Եթե չկա որոշում, թե ինչ են անելու, ինչ իմաստ ուներ այդ թատրոնը, եթե մինչեւ հիմա չգիտեն՝ բյուջեում փող կա, թե չկա՝ ՀԷՑ-ի դիմաց փոխհատուցում վճարելու համար, ինչի՞ համար էր այդ ամբողջ բեմականացումը: Պատասխանը միանշանակ է. Փաշինյանը, լինելով շուստրի գեղցի, ուզում է գին գցել, ուզում է ասել՝ մենք ՀԷՑ-ի դիմաց փոխհատուցում կտանք, բայց ոչ դրա իրական գնին համարժեք, կտանք այնքան, որքան հարկ կհամարենք: Ստացվում է, որ Փաշինյանն ինքն է որոշելու, թե ինչ գնով է Կարապետյանից խլելու ՀԷՑ-ը: Սա նույնն է, որ դուք գնաք ավտոշուկա եւ ոչ թե մեքենայի սեփականատիրոջից գին հարցնեք, թե որքանով է այն վաճառում, այլ գրպանից հանեք մի 100 հազար դրամ, տաք սեփականատիրոջը եւ ասեք, որ նրա մեքենան այլեւս ձերն է: Սեփականատերը չի կարող ընդդիմանալ, քանի որ դուք մինչ այդ հասցրել եք կապել նրա ձեռքերն ու ոտքերը, ՀԷՑ-ի դեպքում՝ նախօրոք կալանավորել եք:

Փաշինյանն այդ ամբողջ թատրոնը բեմականացրել էր, որ ասի, թե ինչ հիմնավորմամբ է «քցում» Կարապետյանին կամ ինչու է վճարում ավելի քիչ, քան ՀԷՑ-ի իրական արժեքն է: Փաշինյանն իր ենթակա Ռոմանոս Պետրոսյանին ասում է, որ ՀԷՑ-ի գնի մեջ էր մտնում նաեւ նրա լիցենզիան, քանի որ իր հրամանով Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ՀԷՑ-ին զրկել է լիցենզիայից, նշանակում է՝ լիցենզիայի գինը պետք է դուրս գա ՀԷՑ-ի գնից: Հետո Ռոմանոս Պետրոսյանն ասում է, որ ՀԷՑ-ը հավելագրումներ է արել, եւ այդ հավելագրումները հիմնականում արվել են համայնքային նշանակության կազմակերպությունների վրա՝ համայնքների գիշերային լուսավորություն, մանկապարտեզներ, դպրոցներ, այլ պետական կառույցներ, այդ գործերով հարուցված են տասնյակ քրեական գործեր: Պետրոսյանն ասում է, որ ՀԷՑ-ի բազմաթիվ տվյալներ անհետացել են, դրանով ուզում է հասկացնել, որ տարբեր տարիների հնարավոր հավելագրումների տվյալները ոչնչացվել են, եւ դրանք հնարավոր չէ ստույգ հաշվարկել: ՀԷՑ-ին պետք է հաշիվ ներկայացնել պետությունից տարած գումարների մասով, բայց չգիտեն, թե ոնց այդ հաշիվը ներկայացնեն, ինչ հաշիվ ներկայացնեն, ուրեմն որքան ուզեն, այնքան էլ կներկայացնեն:

Այսպիսով Փաշինյանն ուզում է «քցել» Կարապետյանին, խլել ՀԷՑ-ը, բայց դրա դիմաց քիչ գումար վճարել, հնարավոր է՝ շատ սիմվոլիկ: ՀԷՑ-ին վճարվելիք գումարից հանվելու է լիցենզիայի գումարը, փաստացի Փաշինյանն ասում է, որ ինքը լիցենզիան առանձին կծախի նոր սեփականատիրոջը, գումարից կհանվի նաեւ պետությանն իբրեւ թե տված վնասը, որի իրական չափը հնարավոր չէ հաշվարկել, քանի որ ՀԷՑ-ն այդ տվյալները ոչնչացրել է, նշանակում է՝ Փաշինյանն ինքը կորոշի, թե որքան վնաս է տվել ՀԷՑ-ը պետությանը, որքան գումար հավելագրել պետական կառույցների վրա, եւ այդ չափով գումար կհանի ՀԷՑ-ի գնից: Հնարավոր է մի իրավիճակ, որ Փաշինյանը հայտարարի, թե դեռ մի բան էլ Կարապետյանն է պետությանը պարտք:

Քանի դեռ դու իշխանություն ունես, կարող ես մտածել, որ քո ցանկացած գժություն հանգիստ կանցնի՝ համոզված լինելով, որ դրա համար որեւէ պատասխան չես տա: Բայց կա մի «բայց», Փաշինյանը ոտնձգություն է անում ռուսական կապիտալի նկատմամբ, կարեւոր չէ, որ դա մասնավոր սեփականություն է: Պատկերացնում եք, թե ինչ կլինի, եթե որեւէ երկիր ոտնձգություն անի «Բրիթիշ Փեթրոլիումի» կամ ամերիկյան «Կոկա կոլայի» նկատմամբ, որոշի խլել դրանք սեփականատիրոջից: Ինչո՞ւ է Փաշինյանին թվում, թե արեւմտյան սեփականությունը պաշտպանված է այդ երկրների իշխանությունների կողմից, եւ դրանց նկատմամբ որեւէ ոտնձգություն անթույլատրելի է, իսկ ռուսական կապիտալն անտերուտիրական է:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 26.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԿՅԱՆՔԸ ԿԱԶԱՏԱԿԱՆԱՆԱ՞

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ու կրաինական հակամարտության կարգավորման ամերիկյան նոր պլանը թեեւ դեռ քննարկումների փուլում է, եւ դժվար է կանխատեսում անելը, թե արդյոք պատերազմը կավարտվի՞ մինչեւ հինգշաբթի, սակայն ՌԴ-ում փորձագետները սկսել են խոսել այն մասին, թե արդյո՞ք պատերազմի ավարտը երկրի ներքաղաքական կյանքում փոփոխությունների նոր մեկնակետ կդառնա: Համաձայն տիրապետող տեսակետի, նույնիսկ եթե պատերազմն ավարտվի այս հինգշաբթի, միեւնույն է, պուտինյան վարչակարգի ներքաղաքական գծի մեջ ազատականացման միտումներ չեն լինի, եւ պետական հռետորաբանությունը կշարունակի կառուցվել հանրային միասնականության ու համախմբվածության տրամադրությունների շուրջ: Կշարունակեն պահպանվել արտաքին սպառնալիքներին դիմագրավելու, նոր ռեգիոնները համատեղ ուժերով վերականգնելու թեզերը:

Հիմնական խնդիրը ներքաղաքական կյանքում, ինչպես նշում է nezigar տելեգրամյան ալիքը, կդառնա պատերազմի արդյունքների մեկնաբանությունն ու ըստ դրա՝ մատուցումը հասարակությանը: Այլ խոսքով՝ կքննարկվի այն հարցը, թե որքանով կատարվեցին այն առաջադրանքները, լուծվեցին խնդիրները, որոնք դրվել էին 22 թ. փետրվարին: Միաժամանակ, սոցհարցումները փաստում են, որ պատերազմի ավարտը դրական կընդունի ռուսաստանցիների 60-65 տոկոսը, եւ այն կստեղծի հաղթանակի տրամադրություններ ու էֆեկտ: Պատերազմի ավարտի դրական տրամադրությունները, ըստ կրեմլյան ստրատեգների, կպահպանվեն 2-3 ամիս, որից հետո արդեն կսկսեն գլուխ բարձրացնել հարակից հարցերը, ինչպիսիք են՝ դեմոբիլիզացիան, անցումը նպատակների նոր ֆորմատին, դժգոհությունները եւ այլն:

Այս ամենը, ըստ վերլուծաբանների, դժվար թե թույլ տա, որ կյանքը, ու քաղաքական կյանքը՝ հատկապես, Ռուսաստանում գնա դեպի ազատականացում: Պատերազմն ինքնին ու դրա շարունակումը պահանջում են եղած ռեսուրսների համակենտրոնացում, հասարակության ճիգերի ու ջանքերի գերլարված գործադրում, երբ ամեն բան մի կողմ է դրվում, ներառյալ նաեւ սոցիալ-տնտեսական դժգոհությունները: Պատերազմի ավարտը, բնականաբար, այդ դժգոհությունները դարձյալ ասպարեզ է բերելու, ու կուսակցությունները եթե ճիշտ մարտավարություն ընտրեն, ապա իրենց շարքերի համալրման հարցում կարող են զգալի հաջողությունների հասնել, եթե ռուսաստանյան խիստ սահմանափակ մանեւրայնության տարածքում կարողանան քննադատություններով հանդես գալ՝ ուղղված իշխանություններին: Զուգընթաց՝ սպասել, որ ռուսաստանյան քաղաքական-կուսակցական համակարգում կլինեն փոփոխություններ, սխալ է: Նույնկերպ եւ՝ սպասվող Դումայի ընտրություններում մեծ փոփոխություններ ակնկալելն է սխալ:

«Եդինայա Ռոսիան» թերեւս կավելացնի իր մանդատների թիվը, ինչպես նախատեսված է կրեմլյան ստրատեգների կողմից: Քաղաքացիական լիարժեք կյանքին վերադարձը կունենա նաեւ մեկ այլ խնդիր: Տեւական պատերազմը զգալիորեն ուժեղացրել է ուժային կառույցների դերակատարումը: Այդ կառույցները ոչ թե ուրվագծում են ներքաղաքական կուրսը, այլ մշակում են ներքաղաքական լանդշաֆտը: Բողոքի ցույցերի խիստ արգելքները, գրաքննությունը եւ այլ սահմանափակումները կշարունակեն գոյատեւել նաեւ հետպատերազմական շրջանում: Իհարկե, հնարավոր է, որ որոշակի «հալոցք» լինի, սակայն դրանք միայն իմիտացիա են՝ հանրային տրամադրությունները եւ հանրային տարբեր խմբերի կառավարելու համար: Իսկ ահա պատերազմի ավարտից հետո իշխանությունների թիվ մեկ խնդիրը՝ բոլոր մակարդակներում, լինելու է մարդկանց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը՝ կարծում են մասնագետները:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am